ՊԱՏՄՈՒՄ Է ԲԵՐԴԱՁՈՐԻ ՊԱՏԱՆԴԸ

«Մեր ճանապարհը ուղեկցւում էր սարսափելի ծեծով...»

«Մայիսի 8ի առաւօտեան ժամը 7ին ռուսական զօրքը յարձակուեց գիւղի հեռուստաաշտարակի վրայ: ՄՕՀՁի կողմից դիմադրութիւն էր ցոյց տրուել, որի հետեւանքով մեր տղաներից մէկը զոհուել էր: Տանկի կրակոցով պայթեցրել էին պահակակէտը ու յետոյ մօտենալով, աւտոմատային կրակահերթ էին բաց թողել սպանուած մարդու վրայ: Այնուհետեւ զօրքը տանկով ու զրահամեքենաներով ներխուժեց գիւղ: Սկսեցին կրակել աջ ու ձախ: Եթէ մըտած տները դատարկ էին գտնում, կրակում էին իրերի, կահոյքի վրայ: Նրանք պատճառաբանում էին, թէ գրոհայինների հետեւից են եկել, թէեւ ոչ ոք որեւէ դիմադրութիւն ցոյց չէր տալիս: Հնարաւոր չէր իմանալ, թէ գործողութիւնն ով էր ղեկավարում, որովհետեւ համազգեստների վրայ ուսադիրներ չկային, բացի դա, բոլոր զինուորականների դէմքերը մրոտած, սեւացրած կամ գծերով էին պատած: Հաւաքեցին ու իրենց հետ տարան 11 մարդու, այդ թւում գիւղի մի քանի ղեկավարների, ինչպէս նաեւ տարան ՄՕՀՁի տղաներին: Բայց սրանով չբաւականացան, այլ հետ եկան արդէն ժամը 15ին ու իրենց հետ տարան գիւղի մնացած բոլոր տղամարդկանց, որոնց թւում ծերունիների ու 2 հոգեկան հիւանդների: Կարծում եմ, պարզ պէտք է լինի, որ գրոհայինների մասին հորինուածը սուտ պատրուակ էր, մանաւանդ որ, կրկնում եմ, ՄՕՀՁից բացի, գիւղում այլ զինուած մարդիկ չեն եղել: Երկրորդ անգամ տարուածների մէջ էի նաեւ ես: Մեզ տարան Կուբաթլու, հարցաքննեցին այնտեղ ադրբեջանցիք, ուր եւ անցկացրինք առաջին գիշերը: Յաջորդ օրը ուղղաթիռով զինուորականները տարան Շուշիի բերդ եւ յանձնեցին մեզ ադրբեջանցիներին: Ամբողջ մեր անցած ճանապարհը ուղեկցուել է սարսափելի ծեծով, որը Շուշիում շարունակել են արդէն ադրբեջանցիք: Մեզ հարցաքննում էին թուրքերը, բայց մի անգամ ոչ թէ հարցաքննութեան, այլ աւելի շուտ զրոյցի տարան մի ռուս զընդապետի մօտ, որի հետ խօսակցութիւնից գլխի ընկանք, որ նա այդտեղ էր գտնւում, որպէսզի թոյլ չտար մեզ սպանել: Իհարկէ, նրա մօտ թուրքերի վերաբերմունքից չէինք կարող բողոքել, որովհետեւ այդ դէպքում մեզ կը սպանէին: Շուշիի բերդում մեզ պահում էին խցերում 3-3 հոգով, ուրիշների հետ չէինք շփւում, բայց ձայներից ու այլ նշաններից կարելի էր ենթադրել, որ ձերբակալւած հայեր շատ կային: Յունիսի 6ին, 24 հոգիանոց մի խմբով մեզ բաց թողեցին, բայց բերդում մնացին շատ հայեր, ինչպէս եւ ՄՕՀՁի տղաները: Եկանք տեսանք գիւղը կայ, ժողովուրդը պինդ է, իսկ դա ամենակարեւորն է»:

Դժուար է ասել, թէ այս ամէնը վաղը չի կրկնուելու եւ, ուստի, նպատակայարմար գտնուեց չըհրապարակել այս վկայութեան հեղինակի ով լինելը: